ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1314-Ա « 05 » ապրիլի 2024թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի Հ.86-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի հ.86-Ա որոշմամբ՝ Ծ.Իսակովի պողոտայի հ.15/11 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 16.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրվել է «Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների» հողերի կատեգորիա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 3–րդ հոդվածով, 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով և 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության վարչության 21.12.2023թ. և 27.12.2023թ. հ.Ն/70292-23 եզրակացությունները.

1.Երևան համայնքի սեփականություն հանդիսացող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15052023-01-0299 վկայական/, Ծ.Իսակովի պողոտայի հ.15/11 հասցեում գտնվող 16.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի հ.86-Ա որոշման համաձայն՝ սահմանել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակա-ռուցվածքների, իսկ գործառնական նշանակությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էներգետիկայի օբյեկտների:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ Երևան համայնքի անվամբ իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո, Երևանի քաղաքապետի 02.02.2023թ. հ.272-Ա որոշման հիման վրա, կառուցապատման իրավունքով Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին տրամադրված /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18072023-01-0385 վկայական/ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները ենթակա են վերագրանցման:

3. Հողամասի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակություններով իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ